ԿՈԱԼԻՑԻՈՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՎԻՆՆԵԹ ՀԱՅԱՍՏԱՆ» Կանանց Ռեսուրս Կենտրոնների Ցանցի աշխատանքներին միանալու մասին

Ք.Գորիս «30» նոյեմբեր, 2018թ.

ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում՝ ներքոստորագրյալներս, ՀՀ-ում գրանցված և գործող ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետև՝ կազմակերպություններ)՝ Կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամ, «Մեղրու կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ, «Կապանի կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ, «Սիսիանի կանանց ռեսուրս կենտրոն» հիմնադրամ, «Եղեգնաձորի կանանց ռեսուրս կենտրոն» հիմնադրամ, «Իջևանի կանանց ռեսուրս կենտրոն» հիմնադրամ, «Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան ՀԿ, «Աշտարակի տարածաշրջանի կանանց ասոցիացիա» ՀԿ, «Ապագայի Շողեր» ՀԿ և Վանաձորի, Նոյեմբերյանի կանանց նախաձեռնող խմբերի ներկայացուցիչներս՝

- կարևորելով ՀՀ-ում կանանց տնտեսական և քաղաքական դերի բարձրացման առաջնահերթությունը,
- շեշտադրելով երեխաների, գենդերային զգայուն քաղաքականության մշակման, ջատագովման և այդ գործընթացներում հանրային մասնակցության ապահովման առաջնահերթությունները,
- նպատակ ունենալով տեղական ինքնակառավարման մարմինների(այսուհետև՝ ՏԻՄ) և պետական կառույցների հետ համագործակցության զարգացման միջոցով բարձրացնել որոշումների կայացման գործընթացներում կանանց հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների ներգրավվածության աստիճանը,
- համոզված լինելով, որ այդ մասնակցությունը նպաստելու է կանանց հիմնախնդիրների լուծման շուրջ կազմակերպությունների միասնական դիրքորոշման ձևավորմանը,

նպատակահարմար ենք գտնում ձևավորել կոալիցիա և համատեղել մեր ջանքերը ներքոնշյալ նպատակների և խնդիրների իրականացման գործընթացներում:

ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Նպաստել համայնքային, մարզային, ազգային և տարածաշրջանային մակարդակներում կանանց ռեսուրս կենտրոնների ստեղծմանն ու զարգացմանը.
- Բարձրացնել տնտեսության և քաղաքականության մեջ կանանց մրցունակությունը, այդ թվում՝ շուկայի պահանջներին համապատասխան կարողությունների զարգացման միջոցով.
- Ընդլայնել Կանանց զբաղվածության հնարավորությունները, այդ թվում՝ տեղական մատչելի հումքի վրա հիմնված սոցիալական ձեռնարկատիրության զարգացման միջոցով.

- Նպաստել կանանց կարիքների վրա խարսխված տնտեսական և սոցիալական քաղաքականության, ծրագրերի մշակմանը և իրականացմանը.
- Նպաստել կանանց տնտեսական և քաղաքացիական ակտիվության բարձրացմանը և մոբիլիզացմանը, այդ թվում՝ իրենց տնտեսական և հանրային շահերի առաջ մղմանն ուղղված.
- Բարձրացնել. Սոցիալական փոփոխություններին ուղղված նախաձեռնությունների արդյունավետությունը, այդ թվում՝ կանանց ռեսուրս կենտրոնների ջանքերի պարբերական մոնիտորինգի և գնահատման միջոցով.
- Բարձրացնել Հայաստանում և Արևելյան գործընկերության այլ երկրներում ցանցի դերն ու ազդեցությունը, ռեսուրս կենտրոնների և դրանց ցանցի կարողությունների հզորացման, այդ թվում՝ ռեսուրս կենտրոնների մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացման, Հայաստանում և տարածաշրջանում ցանցի ճանաչելիության և միջազգային կապերի ամրապնդման, այդ թվում՝ ՎԻՆՆԵԹ Եվրոպային անդամակցության միջոցով:
- Նպաստել համայնքային և ազգային մակարդակներում երեխաների և գենդերային զգայուն բյուջետավորման արդյունավետ մեխանիզմների մշակմանն ու ներդրմանը.
- Զարգացնել ՏԻՄ և պետական կառույցների հետ կազմակերպությունների համագործակցությունը՝ ուղղված նորմատիվ իրավական ակտերի փորձաքննության ապահովմանը, մոնիթորինգի, հարցումների, հետազոտությունների իրականացմանը.

Կողմերը կարող են նաև՝

- ✓ Համատեղ հանդես գալ ծրագրային առաջարկություններով և իրականացնել համատեղ կոնսորցիումային ծրագրեր,
- ✓ Համատեղ իրականացնել Կողմերի մասնագետների ներքին հաղորդակցման զարգացմանն ուղղված հանդիպումներ,
- ✓ Համատեղ իրականացնել հանրային իրազեկման միջոցառումներ, այդ թվում՝ զանգվածային լրատվամիջոցներով,
- ✓ Համագործակցել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ միջոցառումների շրջանակներում:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Կողմերը պարտավոր են առաջնորդվել համագործակցության հետևյալ հիմնական սկզբունքներով՝

- ✓ փոխադարձ վստահություն,
- ✓ պատասխանատվություն,
- ✓ փոխըմբռնում և փոխզիջում,
- ✓ թափանցիկություն:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- ❖ Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անժամկետ:

- Սույն Հուշագրի ցանկացած փոփոխություն կատարվում է գրավոր և դառնում նրա անբաժանելի մասը:
- Հուշագիրը կարող է դադարեցվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, մյուս Կողմին առնվազն 30 օր առաջ գրավոր տեղեկացնելու պայմանով:
- Սույն Հուշագրի վերաբերյալ Կողմերի միջև ծագած անհամաձայնություններն ու վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով:
- Սույն Հուշագիրը կնքվում է մեկ բնօրինակից, հայերենով:

Կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամ	«Մեղրու կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ	«Կապանի կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ	«Սիսիանի կանանց ռեսուրս կենտրոն» հիմնադրամ
Գործադիր տնօրեն՝ Ռուզաննա Տոռոզյան	Նախագահ՝ Սաթիկ Հարությունյան	Նախագահ՝ Քրիստինա Սաղաթելյան	Տնօրեն՝ Սրբուհի Գրիգորյան
Կ.Տ.	Կ.Տ.	Կ.Տ.	Կ.Տ.
«Իջևանի զարգացման Ռեսուրս կենտրոն» հիմնադրամ	«Եղեգնաձորի զարգացման Ռեսուրս կենտրոն» հիմնադրամ	«Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան ՀԿ	«Աշտարակի տարածաշրջանի կանանց ասոցիացիա» ՀԿ
Նախագահ՝ Անահիտ Ալավերդյան	Գործադիր տնօրեն՝ Կարինե Մովսիսյան	Նախագահ՝ Աշխեն Թարայան	ՀԿ Նախագահ՝ Գայանե Դանիելյան
Կ.Տ.	Կ.Տ.	Կ.Տ.	Կ.Տ.
«Ապագայի Շողեր» ՀԿ	Վանաձորի կանանց նախաձեռնող խումբ	Նոյեմբերյանի կանանց նախաձեռնող խումբ	
Նախագահ՝ Արևիկ Զուլյան	Խմբի առաջնորդ՝ Հռիփսիմե Միրզոյան	Խմբի առաջնորդ՝ Տաթևիկ Մարալչյան	
Կ.Տ.	Կ.Տ.	Կ.Տ.	Կ.Տ.